Հավելված թիվ 5
ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 26-ի թիվ 21-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Նոր Խաչակապ համայնքում աղբահանության վճար վճարողներն են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի տան, շինության սեփականատեր համարվող ըստ այդ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) այդ հասցեում բնակվող կամ, որևէ այլ իրավունքով այդ անշարժ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ անհատ ձեռնարկատերերը), իրավաբանական անձինք, պետական և մասնավոր հիմնարկները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ գույքի վարձակալը կամ անհատույց օգտագործողը:
2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և մուտքագրումը համայնքի բյուջե վերապահել համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետին, իսկ նրա բացակայության դեպքում աշխատակազմի քարտուղարին:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետը համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն ընթացիկ ամսվա ընթացքում այդ ժամանակաշրջանում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև աղբահանության վճարի գանձման աշխատանքների իրականացման արդյունքների վերաբերյալ:
4. Նոր Խաչակապ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և աղբահանության վճարի հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության վճարի դրույքաչափերին համապատասխան սույն կարգով՝
   1) Կենցաղային աղբի համար ըստ անշարժ գույքի հասցեի հաշվառում ունեցող և (կամ) այդ հասցեում բնակվող յուրաքանչյուր անձի:
   2) Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ թիվ 4 հավելվածում սահմանված աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:
5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի

պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Նոր Խաչակապ համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏՌՈՒՉՅԱՆ